ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2016թ. հունիսի 27 **N 79 -Ա**

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի <<բ>> կետով և 13-րդ հոդվածի <<ա>> կետով՝ ***որոշում եմ***.

Արտակարգ իրավիճակներում ու ռազմական դրության ժամանակ Արագածոտնի մարզի տարածքում տեղակայված և զորահավաքային առաջադրանք ունեցող (ռազմական դրության ժամանակ գործունեությունը շարունակող) կազմակերպությունների կայուն գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել՝

1) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի միջոցառումների տարեկան աշխատանքային պլանը համաձայն N 3 հավելվածի,

4) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի կազմակերպությունների գործունեության կայունության բարձրացման փաստաթղթերի փաթեթը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների ղեկավարներին՝

1) մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը տեղայնացնել N 4 հավելվածով հաստատված գործունեության կայունության բարձրացման փաստաթղթերի փաթեթը,

2) մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը հաջորդ տարվա համար հաստատել «Կազմակերպության գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի տարեկան միջոցառումների աշխատանքային պլանը»:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի նախագահին՝

1) կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների գործունեության կայունության բարձրացման փաստաթղթերի տեղայնացման գործընթացը և ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն,

2) մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ը հաջորդ տարվա համար հաստատել «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի տարեկան միջոցառումների աշխատանքային պլանը»:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը դնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ՝ Մ.Աբգարյանի վրա:

Գ.ԳՅՈՌԱԼՅԱՆ